Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/6653/02/23**

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի հոկտեմբերի <<30>>-ին (ք. Երևան)

Ծանոթանալով «ՄԵԴԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության (*գրանցման համարը՝ 271.110.1124222, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 4թղմ, 7շ., փ.18, էլ. փոստ՝ info@medtrade.am, այսուհետ նաև՝ Հայցվոր)* ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության *(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5, էլ. փոստ՝ modpress@mil.am, այսուհետ նաև՝ Պատասխանող)*՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, այն է «ՀՀ ՊՆ–ԲՄԱՊՁԲ–23–9/2» ծածկագրով բաց մրցույթ հայտարարելը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր «ՄԵԴԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ–ԲՄԱՊՁԲ–23–9/2» ծածկագրով բաց մրցույթ հայտարարելը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավորի աշխատակազմին են հանձնվել 25.10.2023 թվականին:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ2/6653/02/23 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2023թ. դեկտեմբերի 08-ին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by A.ATANESYAN
ANI 5101901431
Date: 2023.10.30 15:03:07 AMT

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**